

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԱՅԻ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւններին համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միթէ այսպէս կը շարունակվի — Ներքին տեսչութիւնը, Նամակ Բայանդուրից, Ներքին լուրերը: Արտաքին տեսչութիւնը, Ֆրանսիա, Թիւրքիա, Նամակ Թիւրքիայից, Արտաքին լուրերը: — Մշակի՝ հեռագիրները: — Յայտարարութիւնները: — Տեղեկացոյցը: — Բանասիրական: Ձալալեղիք:

ՄԻԹԷ ԱՅՍՊԵՍ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՆԵՐԻ

Երբ որ տեղական թէ վրաց, թէ հայոց և թէ ռուսաց լրագրողները խմբագիրները սկսում են միմեանց մէջ անկեղծ կերպով խօսել նրանցից իւրաքանչիւրն էլ խոստովանվում է որ ոչ մի լրագիր մեր երկրում չէ ծածկում իր հրատարակութեան ծախսերը և որ խմբագիրը պէտք է ամեն տարի իրանից մի յայտնի գումար զոհի հրատարակութեան գէֆիցիտը ծածկելու համար: Իրան խմբագրի աշխատանքն էլ վարձատրված չէ, և բացի սորանից նա պէտք է անդադար զոհի իր սեփական միջոցներից:

Խմբագիրը անում է այդ քանի մի տարի, բայց վերջը նրա միջոցները և միջոցների հետ էլ նրա համբերութիւնը հասնում են,

և, ահա, յուսահատված իր գրական գործունէութեան ապարդիւն լինելուց, նա թողնում է գործը... Եւ միթէ, ճշմարիտ, կարելի է միշտ այդպէս շարունակել...

Մեր երկրում մօզայիկ խանութ պահողը, կամ գինեկաճառը, կամ քաղցրեղէնների ծախողը ոչ թէ միայն կարողանում են իրանց առուտուրով ապահովել իրանց, բայց կարողանում են և հարստանալ մինչև անգամ:

Իսկ լրագիր հրատարակողը, ոչ թէ միայն չէ վարձատրվում իր աշխատանքը, բայց և անդադար վնասվում է:

Եւ միթէ այն երկրին որտեղ գինի, քաղցրեղէններ և մօզայիկ շուկայում աւելի մեծ պահանջ են, քան թէ ընթերցանութիւնը:

Միթէ այդպէս կարելի է շարունակել...

Ոչ, կամ լրագրութիւնը պէտք է յուսահատվի, խմբագիրները թողնեն, գցեն իրանց պարապմունքը, կամ պէտք է որոնեն մի միջոց որ լրագրութիւնը ինքն իրան ապահովի, մի պահանջ դառնայ հասարակութեան համար:

Երիտասարդը բարձրահասակ էր, ցամաք և նիհար, բայց զարգացած ուկնդրով և ամուր մկնային կազմվածքով: Նա հագնված էր քուրդի ձեռով և գտնվում էր կատարեալ գինեկառութեան մէջ, Ասիական հրացանը, կեռ թուրը, մի զոյգ ատրճանակներ, թիկունքի վրա ձգած ահագին երկաթեայ վահանը և երկայն նիզակը կազմում էին, կարծես, նրա մարմնի մի—մի անդամները:

Նա գնում էր, և երբեմն կանգ առնելով լի մտախառնութեամբ նայում էր իր շուրջը: Լեռների կանաչազարդ պատկերները չէին, որ գրաւում էին նրան. նա գեղատէր ճաշակ և բնութեան հրապուրանքը զգալու ընդունակութիւն չուներ: Բայց նա զարմանում էր, տեսնելով, որ իր ծանօթ լեռները բոլորովին դատարկ էին: Տասն օր հալիւ կը լինէր, որ նա մի անգամ ևս անցել էր նոյն ճանապարհով, այն ժամանակ այսպէս չէր, այն ժամանակ բոլորովին ուրիշ ապաւորութիւն էին գործում այն գեղեցիկ լեռները: Խոտաւէտ արօտներում արածում էին ուշաբանների հօտերը, ձորերի մէջ կազմված էին խաչնարած հայերի վրանները, և հովիւների սրինգը հեռուէն հնչելով էր թռչունների առաւօտեան ձայների հետ: Այն ժամանակ հովիտների և լեռնազաւթերի վրա հողազործ հայը, իր սովորական երգը երգելով, կամ վարում էր, և կամ հնձում էր: Մի խօսքով, մարդը բնութեան հետ միանալով, անընդհատ և քաղցր աշխատութեան մէջ էին: Իսկ այժմ:—Այժմ ամեն գործ դադարել էր, ոչ մի հողի և ոչ մի շունչ չէր երևում. նոյն իսկ ճանապարհը, որով գնում էր նա, թափուր էր մնացած յաճախ անց ու դարձ անող քարաւաններից: Ինչ էր պատճառը: Կարծես, մի չար և ոչնչացնող ձեռք՝ անցել էր այն ընդարձակ

Հասարակութիւնը իրաւունք չունի պահանջել որ ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու, որ չստենք ժողովրդին լուսաւորելու գործի ամբողջ ծանրութիւնը բարձրած լինի մի քանի անհատների վրա միայն...

Այդպէս պէտք է գտնել մի միջոց, մի աղբիւր, որով մեր լրագրութիւնը կարողանայ ինքն իրան ապահովել — եթէ ոչ, մեր լրագրութեան գործը շուտով կը հասնի իր օրհասականին: Միթէ այն հասարակութիւնը, որ ինքն չէ հասկանում իր պահանջները, իր օգուտները, իր շահերը, չէ կատարում իր պարտաւորութիւնները, այդ տեսակ հասարակութիւնը կարող է պահանջել անհատներից որ նրանք անդադար անձնագրհօլութիւն անեն:

Խօսելով մասնաւորապէս մեր հայոց հասարակութեան մասին, մենք միշտ կրկնել ենք, որ հային լրագրութեան գործին հետաքրքրելու համար պէտք է նրան բացի լոկ ընթերցանութեամբ գրաւելուց, ներկայացնել նրան լրագրի հետ և մի որ և է նիւթական շահ...

տարածութեան վերայով, իր յետքից թողնելով աւերակներ և ամապութիւն...

Երիտասարդը զգաց սառուտութիւն մի քան, և նրա արեւից այրված գորշ դէմքը գունաթափվելով, ստացաւ մոյգ գեղանաւոր դոյն: Երկուց չէր, որ այնպէս վրդովեց նրան, երկուց ասած բանը ծանօթ չէր նրա երկաթի սրտին: Բայց նրա մէջ վառվեց մի կիրք, որ աւելի նման էր կատաղի բարկութեան:

Ճանապարհը այժմ ուր—մոլոր պտոյտներով բարձրանում էր դէպի սարի գագաթները, գագաթից երևացին նրան նիզակների սուր—սուր ծայրերը, և փոքր ինչ ցած իջնելով, տեսաւ, որ իր առջև գնում էին մի խումբ ձիաւորներ: Երեք, ձիաւորներն ուղիղ տեսան նրան, որովհետեւ կանգնեցին, մինչև կը հասնէր մենաւոր ճանապարհորդը: Բայց դեռ մէջտեղում բաւական տարածութիւն կար:

Երիտասարդի ուշադրութիւնը գրաւեց մի բան. նա նկատեց, որ ձիաւորները քրդեր էին, նրանք երգում էին և ուրախ էին, որպէս կուռքներ, որ վերադառնում էին յաղթանակով: Նրա աչքերը այնքան սովորած էին այս բարբարոս ժողովրդի ցոյցերին, որ ամենաշնչին երեւոյթից կարող էր շատ բաներ գուշակել: Այս պատճառով արեւը զարկեց նրա զննիւն, երբ տեսաւ, որ նրանց նիզակների ծայրերին զրօշակների նման ծածանվում էին շորի կտորներ: Հը—մուտ աչքը առաջին անգամից կարող էր նկատել թէ դրանք կոմի հազուատներ էին, և այն ստորին հազուատը, որ համատարածվում միշտ հեռու է պահում տղամարդի աչքերից...

Դա բարբարոսութեան ամենախայտառակ մի ցոյցն է, որ պարկեշտ կանանց ողջախոնութիւնը բռնաբարելուց յետոյ, դեռահաս կոյսերի անմե-

Ենցեալ տարի մենք դիտաւորութիւն ունենք մեր բաժանորդներին պրէմիաներ տալ: Եյս տարի այդ չափովեցաւ: Մենք կարծում էինք որ ամենալաւ պրէմիա այն կը լինի որ մենք ամենօրեայ թերթ կառաջարկենք հայերին.... Բայց հայերին այդ տեսակ բաներով գրաւել չէ կարելի. նրանց կարող է գրաւել մի—միայն փող, նիւթական շահ....

Եւ ի՞նչ տարուց մենք դիտաւորութիւն ունենք իրագործել պրէմիաները: Ամեն թէ թիֆլիսցի, թէ դրսի բաժանորդը գրվելով «Մշակին» ամբողջ տարով, կը ստանայ մի ստացական, որի թիւը նրան իրաւունք կը տայ տարվայ ընթացքում մի պրէմիա ստանալու: Պրէմիաները երեք հատ կը լինեն՝ մինը 500 ռուբլ, միւսը 300 ռ. իսկ երրորդ 200 ռուբլ գումարի:

Եյն ժամանակ ի հարկէ ամեն մարդ կը գրվի «Մշակին»: Եւ 10 ռուբլով կը ստանայ ամբողջ տարի ամենօրեայ թերթ, իսկ տարվայ վերջը (կամ սեպտեմբեր ամսին դիցուք) կարող է ստանալ վերել յիշված գումարներից մինը: Ոչ

ղութիւնը խախտելուց յետոյ, չարագործը, որպէս պարծանք իր անբարոյականութեան, որպէս յաղթանակի նշան,—նրանց ամօթոյ ծածկոյթը ցցում է իր նիզակի զննիւն, ցոյց տալու համար, թէ ինքը խղճի և ազնուութեան դէմ մի գործ է կատարել...

Երիտասարդը իր վրդովմունքը զսպելով, մօտեցաւ խմբին, և պահանջելով իր ծպտեալ դերը, ստացաւ սովորական ողջոյնը քրդերէն լեզուով:

—Բարբ ճանապարհ,

—Բարբ ճանապարհ և քեզ, պատասխանեցին նրան, հարցնելով:

—Որտեղից այսպէս,

Երիտասարդը իր նիզակը նեցուկ տալով մարմնին, կանգնեց, պատասխանելով:

—Վանից,

—Ի՞նչ կայ. ո՞ր էք գնում,

—Գնում եմ Բայ—կալայ *), փաշայից նամակ եմ տանում մուգուլներին:

Քրդերը խորհրդաւոր կերպով նայեցին միմեկուրի երեսին:

—Դուք ո՞ր էք գնում, հարցրեց երիտասարդը,

—Գաւուրների դէմ, ասաց նրանցից մէկը.—

Եւ յետոյ կանչել է, Գնում ենք կուռքու:

—Որպէս երևում է, դուք ձեր առաջին քաջութիւնը փորձել էք այդ ողորմելի շորի կտորների վրա... ասաց երիտասարդը հեգնական ծիծաղով:

—Այդ մի փոքրիկ որս էր, որ պատահեց մեզ ճանապարհի վրա. մեր եղբայրները այրել էին մի հայոց գիւղ, բայց կանայքը փախել էին մեր ձակալ լեռան վրա...

—Նրանցից պրծան, ձեր ձեռքը ընկան...

*) Աղբակ գաւառի բերդաբաղաւթն է:

Թէ միայն 500 ռ. բայց և 200
րուբլ փողոցում չէ գտնվի: Այն
ժամանակ մեր լրագրին կը գրվեն
շատերը, որովհետեւ այն ժամա-
նակ հայոց լրագիրը սուղն ան-
գամ կը ներկայացնի հային բոցի
բարոյական օգուտից, ընթերցա-
նութեան գոհարձութենից, նոյն-
պէս և նիւթական օգուտ: Այդ-
պիսով առաջին անգամ հայոց լը-
րագիրը կը դառնայ բազմութեան
համար անհրաժեշտ պահանջ:

Մեր կարծիքով առ այժմ այդ
միակ միջոց է ապահովել ազգա-
յին լրագիրը, անկախ դարձնելով
նրան մասնատր անձնագործե-
նից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱՅՈՒՆԻՐԻՑ

9 մայիսի

Մեր գիւղերի ամենազրկուածը պակասութիւն-
ներից մէկն էլ այն է, որ տարաբաղդաբար շատ
գիւղեր գոյրի են մի հասկացող և անձնատէր
հոգևոր հովիւից, մի կրթութեան և ուսումնասէր
քահանայից, որ համաձայն իր սրբազան կոչ-
ման, աշխատէ իրան յանձնված անմեղ ժողո-
վրդի մէջ ուսումնասիրութիւն, կրթութիւն, խա-
ղապարտական ոգի... ամբողջով: Առ այժմ մե-
զանում կատարելապէս հրաշք է, եթէ մի քահանայ
կարողանայ, թէ եկեղեցում, թէ մասնաւոր տեղե-
րում ուսումնասիրութիւն, բարոյական պարտա-
կանութիւն քարոզել: Այս բանը այնքան հեռու է
մեր քահանաներից, որքան Մասիս ծանր է մի
ցորենի հատիկից: Մենք մեզ դարձնում բաղդաւոր
կը համարենք, եթէ մեր հոգևոր հայրերն են, մեր
հոգու և մարմնի առաջնորդները, կարողանային
գտնել եկեղեցական արարողութիւնները ճշգրի-
թեամբ կատարել: Բայց ցաւալի է, որ ուսման այս
էլ չը գիտեն, բայց են անուս, որ չարականը, որ
գիրքը, որ աւետարանը չուտ բացվից, այն կրու-
կան կարդալ, առանց այլ և այլութեան, որով-
հետեւ, նոցա կարծիքով, մի և նոյն է, թէ այս
օրվայ աւետարանը վաղն են կարդացել, վաղ-

կտրեց երիտասարդը քրդի խօսքը:
Քրդերից մէկը կատաճաւոր կերպով հարցրեց.
— Դու քրդերից ես:
— Սիւլան լեռներից, Հէյդարանից ցեղիցն եմ,
առաջ երիտասարդը նոյն ցեղին յատուկ բար-
բառով:
— Հէյդարանիցները չեն գիտում:
Նրանք պիտի գնան իրանց Դէյլիի առաջ-
նորդութեամբ. Հէյդարանիցն չէ խառնվում Դե-
կաների, Ռաւանդների և Բիլլաւանների հետ *),
որոնց պիտի տան Դէյլի Զաւալէ գիւղերը:
Հպարտ Հէյդարանիցի խօսքերը թէն բաւական
վերաւորական էին իր խօսակցիներին, որոնք
Ռաւանդների ցեղին էին պատկանում, բայց
նապիւրով նրա վրա, որպէս մի պաշտօնական
մարդու վրա, որ փառասիրտ նամակ էր տանում
Բաշ-կալայի մուղուրին, ոչինչ չը պատասխանե-
ցին:
Երիտասարդը խօսքը չուտ տայով, և որպէս
ինքն-իրան խօսելով, ասաց.
— Այդ քնն վատ երկիր է, ինձ առաջին ան-
գամն է պատահում այստեղ լինել. միթէ այս
սարերում հովիւներ և գիւղեր չը կան. սովից
մարեցաւ. ոչինչ չես գտնում ուտելու:
— Կային, պատասխանեցին նրան,— այս կող-
մերում ֆլայն և ր (հայեր) էին բնակվում, բայց
մի օր առաջ անցել են այս տեղից. Հարբիները
*) և ոչինչ չեն թողել:

*) Քրդերի ամենաբարբարոս ցեղերի անուն-
ներ են, որ բնակվում են Պարսկաստանի սահ-
մանների վրա:

**) Քրդերի մի վայրենի ցեղ է, որ բնակվում
է Տիգրիսի վերին ճիւղերի մօտ և տարածվում է
մինչև Մուսուլ:

վանը մի քանի օր առաջ... և այլն: Նրանց կար-
գացած ժամանակն էլ որքան ուշադրութեամբ
լարեա, ակամօքները սրեա, այնու ամենայն ոչինչ
չես հասկանայ. որովհետեւ առանց կետադրու-
թեան նշանակութիւն տալու, կարողում են ան-
բնական և անհուն ձևերով. հարկը չը պահան-
ջած բառերի վրա զօր տեղը չէր տնում, անպի-
տակցաբար անտեղի տեղերում ձայները կտրում,
հարցական կամ բացականչական նշանները ոտքի
տակ առնում, արտում, անցնում և այսպէսով
կարգապահի ձայնին էլ են կորցնում, միտքն էլ:
Աւելորդ է ասել, որ բացի եկեղեցական գրե-
թից, ուրիշ գրքեր կարողաւ առհասարակ պատ է
մեր քահանաների համար, բայց մեր կողմի քա-
հանաները շատ սրբութեամբ, երկնային և հա-
ւատով են պահում այդ պատը: Թէև, առանց բա-
ցառութեան, ստանում են «Արարատ» ամսագիրը,
բայց թէ կարդանք են, թիւ միերը պատասխա-
նեն, որ բուն են դնում նորա չը բաց արած
ծաղիկում: Հատկապէս էլ տանում են քաղաք, և 5
կոպէկով ֆունտը ծաղիկում, ևս ինքն էլ եմ մի քա-
հանայից ամբողջ տարեկանը 10 կոպէկով առել:
— Կարելի արեւ և ընթերցասիրութեան մէջ այս-
քան առաջադիմութեան ունեն, իսկ գրել չա-
տերը ամենակն չը գիտեն, իբրեւ ապացոյց, ան-
հոգևոր կառավարութեան ուղղած մի քահանայի
յայտարարութիւնը. որի պատճէնը նոյնութեամբ
արտադրում եմ այստեղ:

«Հօքէվոր կառավարութեան հանձն Ալէքսան-
թըրապոլ քաղաքի ի ծխաշտէր» * քահանայ է...
զուգի յայտարարութիւնը: Ի ծիսձ խնձ կուս ան-
թայում դայապայտիւն ցայնկայ մղանէլ ընթ կուս
ավաքի նաղարէնով յառաջին յամբնութեան ի
կողմանէ հար սինը և փեկայինը չիւ ինձ արդիւ
և ըզ բաշխու կամ խաղաթն չէն առեալ. ոյտի
ինթրեմ հօգէվոր կառավարութեան խաղա ըզ
հրամայի պրոսկիման սօձայ: * քահանայ... կան
քահանային:
Թէև մեր քահանաները իրանց անհրաժեշտ
պարտականութեանց մէջ այսքան թերի են, բայց
երկրագործական պարագայութեանց մէջ մեծ ա-
ռաջադիմութիւն են ցոյց տալիս. որովհետեւ,
նոցա մշակների հետ հաւասար վարում են, սեր-
մանում են, ննձում են, կալում են, անպիւն
կողմները չաղախած կաշկերից դարձնում են կրում,
տաւարի տակը սրբում և վերապէս ամեն բան,
առանց ամենին խորհելու, անում են մեր Զա-
նաւէր հայրիկները: Երեւակայեցէք մի մարդ
կարկառված չորերով, հին տրեխները հաղին,
ամիսներով չը լուսացած, մաղ ու միւրուք գզգզված,
իրար խառնված, մի հին փայտի կտորով լլուր
կապած, ձեռքերը անօրինակել կերպով կեղտոտ
և արևի զօրութեանց ձաք-ձքված, օրական
ծանր աշխատանքից բեղաբաժն, գործիքները չա-
լոկած, ձակատի բրտիքը փելով սրբելով, դաշ-
տից տուն է վերադառնում: Այս ողորմելի մարդը
մի գիւղի ծխաշտէր քահանայ է, որ այսօր սո-

նրիտասարդի միջին դէմքը աւելի մռայլեցաւ,
և աշխատելով սառնասիրտ ձեռնաւ, հարցրուց.
— Ուրեմն դուք դատարկաձեռն մնացիք:
— Աստուած ողորմած է, ասացին նրան,
— մինչև Բայազէթ հասնելը որսեր չառ կը պատա-
հեն...
— Թող Աստուած յաջողէ... պատասխանեց
երիտասարդը և կամենում էր շարունակել իր
ձանաղաբը:
Քրդերից մէկը հանեց իր ձիւ. թամբին կա-
պած խորշիկից մի կտոր հաց և պանիր, տուեց
նրան, ասելով.
— Կեր, դու ասացիր, որ քաղցած ես, մինչև
Բաշ-կալա գետ չառ պիտի գնաս:
Տղամարդը չորհալարութեան յայտնեց: Աւա-
ղակների խումբը հեռացաւ:
Այժմ նա հասկացաւ. այն ամայութեան պատ-
ճառը, որ քանի րոպէ առաջ վրդովում էր նրան,
այժմ նա գիտէր, թէ ինչ էր պատահել իր ան-
ցած երկիրների վրա:
Քրդից ստացած կերակուրը նա մի կողմ ձգեց
և շարունակեց գնալ: Իրաւ որ, նա քաղցած էր,
ամբողջ օրը ոչինչ չէր կերել, բայց քաղց չէր
զգում: Լինում են ըսկներ, որ մարդ կերա-
կովում է իր սիրտը մաշելով և ապաւնելով. — երի-
տասարդը այդ դրութեան մէջ էր:

Գ.

Արեւ մտնելու մօտ էր, երբ մեր յօգնած ձա-
նապարհորդը հասաւ մի տեղ, ուր ձանապարհը
հիւղաւորվում էր. ալ ճիւղը տանում էր դէպի
Բաշ-կալա, իսկ ձախը դէպի Բարդուղիմէոս ա-
ռաքեալի վանքը: Նա ընտրեց վերջինը:

Արևի վերջապետ ոչ մի ժամանակ այնպէս
գեղեցիկ չէր զարգարել ամպերը, որպէս այն

վարկանից վաղ է վերադառնում տուն հնձա-
տեղից. որովհետեւ վաղը պատարագիչ է խեղճը:
— Ուրեմն այն մարդը. որ երէկ դաշտում ծանր
աշխատանքներով էր զբաղված, դանազան ան-
վայել բառերով չարանում էր իր ծոյլ մշակների
վրա, այսօր սուրբ եկեղեցու բեմի վրա փառա-
ւորապէս զգեստաւորված «խաղաղութիւն ամե-
նեցուն» է ասում մի և նոյն մշակներին: Այն
կոշտ ձեռքերը, որ երէկ գերանդին էին սրում
և զանազան գործերով էին պարագած, այսօր
սուրբ տաճարի վրա սուրբ սկիւնը և սուրբ աւե-
տարանն են լսածք ու ցածք անում, և այլն:

Մեր քահանաների վարմունքը նոյնպէս ան-
տանելի է ժողովրդի հետ. որովհետեւ նրանք էլ
կազմում են կուսակցութիւններ, կուսեցում են
ժողովրդին միմեանց հետ, անվայել բառերով
անպատուում են իրանց կոյր կամքին չը հետե-
ւողներին. դաւադանով նրանց ձեռնում և իրանք
էլ յաճախակի ձեռնվում, տարիներով խռովում,
և իր ձեռնով, իր կամքին չը հետևողին անձաշակ
թողնում: Ուրեմն աւելորդ չէ ասել, որ այսպիսի
տգէտ, անուսում, խռովաւոր քահանաները ա-
մենին յարկ և պատիւ չունեն ժողովրդի մէջ
և չեն կարող դառնալ:

Այդ, Երեւակայ քաղաքի գիւղերի մէջ թէև
կան հինգ—տաս քահանայ, որոնք թէ իրանց
համեմատութեամբ, թէ չափաւոր կրթութեամբ կա-
րողացել են մինչև ցայսօր քահանայական բարձր
նշանակութիւնը և իրանց վարել ժողովրդի մօտ
բարձրացնել, բայց ինչ օրուստ, մի ծաղկով
զարուսն չի լինի, մի ձեռք ծափ չի տայ և մի
կաթիլ պարզ ջուրը կորչում է անպիւն ուկիա-
նոթի պղտոր ալիքների մէջ:

Նամակիս վերջը այս էլ պէտք է աւելայնելի,
որ Ալէքսանդրապոլի և մեր գիւղերի քահանա-
ները, մէջ, կրթութեան և արժանաւորութեան
վերաբերութեամբ, ոչինչ զանազանութիւն չը
կայ, բայց ինձ յայտնի պատճառներից ստիպ-
ված, լուծում եմ առ այժմ:

Սարիբէգ Տէր-Մեկրիսեղեկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայիսի 15-ին նշանակված էր ԹԻՖԼԻՍԻ
Ղուկասի նիստը մի քանի կարևոր հարցեր վճռե-
լու համար: Նիստը չը կայացաւ, որովհետեւ
օրէնքով պահանջած ձայնաւորների թիւը չը
կար:

Որքանուս Կուր գետը անցկացրեց մօտ 20 եղ-
ներ, մի քանիսը արդէն խեղդված միւսները
դեռ կենդանի:

ԹԻՖԼԻՍԻ մեզ գրում են. «Այստեղի ուսում-
նարանի հոգաբարձուներից մէկը վարում է այդ

երեկոյ. և լեռնային օդը իր փափուկ թաղմու-
թեամբ ոչ մի ժամանակ այնքան կաղտոտիչ
չէր եղել, որպէս այն գիշեր: Բայց երիտասարդը
ոչինչ չէր զգում, որովհետեւ իր սրտը և արտա-
քին աշխարհի մէջ ամենին աւելորդութիւն չը
կար: Նա չարունակում էր դնալ, ինքն իր մէջ
կենսաբանացած, և մի աներկոյթ գօրծութիւն մը-
ղում էր նրան առաջ...
Մոթը սկսել էր փոքր առ փոքր թանձրա-
նալ և գիւղերային աստղերը վաւերում էին հիւս-
նալի զուարթութեամբ: Օդը անշարժ և խաղաղ
էր. Այդ այն ժամն էր, երբ նոյն լեռների վրա
սովորաբար բռնկ էին լինում արօտից դարձող
ոչնայների բառաձայնները, որոնց խուլ արձա-
գանքը զարթեցնում է այնքան գեղեցիկ յիշո-
ղութիւններ հովական կեանքից: Իսկ այն պի-
շեր ոչինչ չէր լսվում. ամեն տեղ տիրում էր
մեռելային անդորրութիւնը:

Բաւական ձանապարհ անցել էր նա, երբ
սկսեց նշմարել տեղ-տեղ հրեղէն կետեր. նրանք
երևում էին խաւարի մէջ շատ հեռուց, երբեմն
ընդարձակվում էին, երբեմն փոքրանում էին և
երբեմն դէպի վեր էին բարձրացնում վիշապների
նման գալարվող բոցեղէն սիւներ: Յանկարծ
բոլորովին հանգչում էին, և աւելի զօրութիւն
ստանալով, հրային հոսանքը տարածվում էր
դէպի ամեն կողմ:

Նա կանգնեց և մի քանի րոպէ անշարժ նա-
յում էր այդ սարսափելի տեսարանին: Ոչինչ էր
պատահել: Նա մտածում էր, թէ այդպէս են
խոտի գեղերը: Բայց նրան այնքան ծանօթ էին
իր չըջակալքը, որ ինքն ևս կասկածում էր իր
կարծիքի մէջ: Նա գիտէր, որ խոտը այդպէս վաղ
չէ հնձվում այս կողմերում: Նա գիտէր, որ այն
ծորերում, ուր այնպէս կատաղի կերպով ձաքա-

պաշտօնը ուսումնարանի հիմնելու օրից մինչև
այսօր: Պարոնը դեռ հիմա էլ մտադիր չէ հրա-
ժարական տալ: Ուսուցիչ Լազարեանի շնորհիւ
ուսումնարանի կից մի դրազարան բացվեց: Օրե-
րում այստեղ վախճանվեց մի կին որ 110 տա-
րեկան էր. Թէլաեղիք մտադիր են ինչպէս կա-
ռավարութեանց, որ իրանց համար պրօգրիմա-
զիա բանան:

Մեզ պատմում են, որ ԹԻՖԼԻՍԻ Հալաբար
մասնում ապրում է մի կին, որ 120 տարեկան է:

Ս. ՊԵՏԵՐՍԲՈՐԳԻՑԻ գրում են «Daily Chroni-
cle» լրագրին հետեւեալը: «Կայսրը հրատարակեց
մի հրովարտակ որով 400 հազար պահեստի զօրք
զէնքի է հրաւիրում Բոլշակայում գտնված զօր-
քերի թիւը պէտք է հասնի 400 հազարի: Անգլիայի
հետ պատերազմը անխախտ է համարվում: Թա-
զաւոր Կայսրը հաստատեց պատերազմական մի
մասնաժողով որին մասնակից են ագնուական-
ները և զինուորական բարձրագույն պաշտօ-
նականները: Այս մասնաժողովին է յանձնված չու-
տով զօրքերի խումբեր կազմելու հոգսը, թէ ար-
տասանմանում և թէ Ռուսաստանում ծառայե-
լու համար: Կամուրմիսի խումբեր պէտք է
կազմվեն, և բոլոր Ռուսաստանում գտնված
պատրաստ զօրութիւնները պէտք է գործածվեն
պատերազմի օգտի համար:»

Խմբագրութեան մէջ ստացվեցաւ մի հայերէն
բրոշյւր հետեւալ վերնագրով. «Բացատրութիւն
ընդդէմ գրութեան Պաղեստին Երեւականեանի,
որ «Արարատ» լրագրում (?) փետրվար ամսոյ սոյն
ամի (?) տպեալ էր»: Բրոշյւրը հրատարակվեցաւ
ԹԻՖԼԻՍԻՄ. ե. Մարտիրոսեանի տպարանում:
Նրա հեղինակը Պարոն Դանաղիւկեանն է:

«Կենդանիների պաշտպանութեան» ԹԻՖԼԻՍԻ
ընկերութեան նախագահը յայտնում է, որ ընկե-
րութեան անդամները և այն բոլոր անձինք, որոնք
հետաքրքրվում են ընկերութեան գործով, հրա-
ւիրվում են մայիսի 20-ին, երեկոյեան 8 ժամին
ընկերութեան ժողովի նիստը, որ լինելու է ա-
մառվայ արձակուրդներից առաջ վերջին նիստ:
Այդ նիստում կը կարգադրվի ընթացող գործերի
զեկուցում և կը բաժանվեն անդամներին վրա-
ցերէն լեզուով ապրված ընկերութեան կանոնները
և հրահանգները:

ԹԻՖԼԻՍԻ Բաղաբային Վարչութիւնը յայտ-
նում է ընդհանուր գիտութեանը, որ նրա ներ-
կայութեամբ մայիսի 24-ին լինելու է աճուրդ
կապալով տալու համար, 5 տարի ժամանակով,
քաղաքային մի գետին 600 քառակուսի սամենի
մեծութեամբ, որ գտնվում է ԹԻՖԼԻՍ քաղաքի
10-րդ բաժնում, Կուր գետին ստանդ գետի-

կում էր հրեհը, կային միայն շատ թուր հայոց
փոքրիկ և մեծ գիւղերայ...

Երիտասարդը չը մօտեցաւ ոչ մէկին. նա
գտնվում էր մի այնպիսի լրան-կորցած դը-
րութեան մէջ, որ երազի պէս բոլոր սարսափելի
տեսարանները գալիս ու անցնում էին նրա աչ-
քերի առջևից:

Նա դուրս եկաւ մեծ ձանապարհից և բար-
ձրացաւ մի բլուրի վրա, որ պատած էր փոքրիկ
թուփերով ու մացաներով: Այն գիշեր էր: Նա
առաջին անգամից նայեց դէպի աստղազարդ
երկինքը և տեսաւ, որ «Տրդատի խաչը» *) ուղիղ
կանգնած էր զինիթի վրա: Նա նստեց մի քարի
վրա, որ փոքր ինչ հանգստանաւ: Մի կողմից
քաղցը, միւս կողմից յօգնածութիւնը, բոլորովին
սպառել էին նրա ուժերը: Բլուրի բարձրութե-
նից հրեղէն կոյտերը այժմ աւելի պարզ երևում
էին լեռնային տարածութեան վրա, Նա դեռ
նայում էր առաջին սառնապարտութեամբ:

Նրա ականջին դիպան մի քանի անորոշ ձայ-
ներ. երևում էր, բլուրի ստորոտից անցնում
էին մարդիկ:

— Ո՛ր գնանք... Տէր Աստուած...
— Գնանք... մի տեղ կը հասնենք...
— Մենքերս գողում են, և երկսաս մարկու-
վրա է...

— Տօր ինձ երկխաւ:
— Աղջիկ, ինչու յետ մնացիր:

— Մայրիկ, քաղցը ծաղկում են ոտներս,
Ձայները լռեցին:
Բոպական լուսնից յետոյ ընդհատված խօ-
սակցութիւնը կրկին շարունակվեցաւ:

*) Մի համաստեղութեան անուն է:

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԵՒ